Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1988 Փետրվար...

Երեկվա նման հիշում ենք, թե ինչպես տասնամյակների կապարանման ծանր շղթաները կոտրվեցին, երբ հայ ժողովրդի հոգու մեջ դարերով ծածկված, ճնշված ու խտացյալ ուժի վերածված ազատության ձգտումը պայթեց և ժայթքեց Արցախի բարձունքներից մինչև քաղաքամայր Երևանի սիրտը, մտավ ամեն մեկ հայի տան մեջ և տարածվեց աշխարհով մեկ սփռված հայության բոլոր խավերի մեջ անխտիր:

Անցնող տասը տարիների ընթացքում ազգովին անցանք բազում եղելությունների միջից: Թե՛ քաղաքական, թե՛ ռազմական և թե՛ տնտեսական փոփոխությունների և վերիվայրումների մեջ ինչ որ մնաց անփոփոխ, այդ հայ ժողովրդի կամքն էր՝ իր արդար իրավունքների անվտանգ պահպանության և պաշտպանության համար Մայր Հայաստանում և Արցախում:

Հազարավոր հայ եղբայրներ և քույրեր, մանավանդ երիտասարդ քաջամարտիկներ, Արցախում իրենց արյունը տվեցին որպես գին այդ կամքի անկաշկանդ պահպանումին: Նրանք օրինակելի արիությամբ շահեցին նահատակության պսակը: Իրենց ապրող ընտանեկան հարազատները, հայրեր ու մայրեր, ամուսիններ ու զավակներ, կրեցին ծանր սուգը իրենց սիրելիների մահվան: Վիրավորներից ոմանց վերքերը դարմանվեցին, ուրիշներ մնացին հաշմանդամ: Հայաստանի և Արցախի պետական իշխանությունները, մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, Նվիրապետական մյուս Աթոռներով և բոլոր թեմերով, բազում հայկական քաղաքական ու բարեգործական կազմակերպություններ ու անհատներ ողջ աշխարհում բաժանեցին սուգը և իրենց եղբայրական ու քրոջական աջակցությունը բերին առանց խտրության, որպեսզի այդ կամքը մնա անբեկանելի և մնա միշտ պիրկ:

Փա՜ռք, հազա՜ր փառք Աստուծո, այս վերջին չորս տարիներին պատերազմական բախումների դադարման այս շրջանին, խաղաղության վիճակ է հիմա տիրում Արցախում: Այս շրջանում բոլորի ճիգերը լարվեցին դեպի ամրացումը Ղարաբաղի ինքնորոշման և անկախության: Այսօր Արցախցին տերն է ու միանգամայն ծառան Արցախին, լինելով միշտ խաղաղության հետամուտ և նվիրված իր հողի մշակման և ժողովրդի կյանքի բարգավաճման: Եվ ամբողջ հայությունը Հայաստանում և արտասահմանում մնաց և մնում է ամրորեն կանգնած իրենից անբաժան Արցախի ժողովրդի կողքին: Մեկ խոսքով՝ ազատագրության շարժումը վերածվեց ազգային զարթոնքի, ինքնության և արժանապատվության զորացման կենսարնթացի:

Բոլորիս համար ակնհայտ իրողություն է, որ Արցախի հարցը դեռ վերջնականորեն չէ լուծված: Անցյալ տասը տարիներին ձեռք բերված հաջողություններով և իրագործումներով միայն հպարտանալու առիթը չէ

այս տասնամյակը: Ետ նայելու և մեր հերոսներով պարծենալու ժամանակը չէ միայն: Ղարաբաղը ո՛չ զգացում է և ո՛չ հիշողություն, ո՛չ երգ և ո՛չ բանաստեղծություն, ո՛չ հեռատեսություն, ո՛չ ճառախոսություն: Ղարաբաղը հո՛ղ է, որ պետք ունի մշակման, ժողովո՛ւրդ է, որ պետք ունի աճելու և կյանքի բնականոն պայմաններ ստեղծելու, պետությո՛ւն է, որ պետք ունի ամրանալու և զորանալու: Դեռ մութ ամպերը չեն հեռացել արցախյան երկնակամարից: Այդ բոլորի մեջ ամենից էականն է, որ ողջ աշխարհը իմանա մեկ բան՝ Ղարաբաղի՛ ձայնը ձայնն է ո՛ղջ Հայության:

Մենք շատ խոսակցություններ ենք ունեցել բարձր պատասխանատվությունների տեր եղող անձերի, կազմակերպությունների ներկայացուցիչների հետ թե՛ հայ և թե՛ օտար: Զգացել ենք և զգում ենք, որ մեր ուժը, Արցախի արդար դատի վերջնական հաղթանակի գաղտնի ուժը, մեր ամբողջ Հայության ամբողջական և միասնական ինքնարտահայտության մեջ է: Եկել է ժամանակը, հատկապես Արցախյան շարժումից և Հայաստանի անկախ Հանրապետության ստեղծումից հետո, որ սկսենք սովորել, որ մենք ազգի կտորվանքներ չենք, Հայաստանահայ, Արցախահայ կամ Սփյուռքահայ ստորոգելիներով բաժանելի: Մենք մեկ ազգ ենք, ուր էլ որ լինենք և ինչ որ լինենք՝ մեր բնակության և քաղաքացիական հպատակության գոյավիճակներով և իրավավիճակներով:

Տասնամյակի այս առիթով՝

Կոչ ենք անում Հայ ժողովրդի բոլոր զավակներին անխտիր, որ միասնական կեցվածքով, ամբողջական և անվերապահ աջակցությամբ զորավիգ կանգնեն Արցախի մեր սիրեցյալ և արիասիրտ ժողովրդին, իրենց եղբայրներին և քույրերին, և հաճախակի այցելություններով ու հանձնառու մասնակցությամբ ներդրումներ կատարեն Արցախի մեր ժողովրդի զորացման և կյանքի բարգավաճման համար:

Կոչ ենք անում բոլոր օտար պետություններին ու եկեղեցիներին և քաղաքական ուժերին ու բարեսիրական հաստատություններին, որ մարդկային իրավանց և ազգային ինքնորոշման սկզբունքին գործնական արտահայտություն տան՝ ճանաչելով Արցախի ժողովրդի անկախ ապրելու իրավունքը և խաղաղ միջոցներով նպաստելու Արցախի հարցի վերջնական և արդար լուծմանը:

Կոչ ենք անում հատկապես Արցախի մեր ժողովրդի զավակներին, որպեսզի մնան տոկուն և անխախտ իրենց քրիստոնեական սուրբ հավատքի և այդ հավատքի հարազատ արտահայտությունը եղող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հանդեպ, մնան հետևողական և հավատարիմ իրենց կապվածության մեջ հանդեպ իրենց պապերի սուրբ հողին և մշակույթի անլռելի և կենսատու վկայություններին: Հորդորում ենք Արցախի մեր ժողովրդի այն զավակներին, որոնք պատերազմի և այլ պատճառներով հարկավորվել են թողնել Արցախը, որպեսզի վերադառնան իրենց տներն ու հողերը և տեր կանգնեն իրենց հայրենական ժառանգությանը: Որքան աճի Արցախի ժողովրդի թիվը, որքան մշակվի հողը, որքան զարգանա տնտեսությունը, որքան առաջ գնա հոգևոր, կրոնական, կրթական, մշակութային կյանքը, այնքան ավելի կամրանա ազատ ապրելու մեր կամքը, որ սիրան է Ղարաբաղյան ազատագրական շարժման:

Քաջատեղյակ ենք այն բոլոր նեղություններին և դժվարություններին, որոնք առկա են այսօր թե՛ Արցախում և թե՛ Մայր Հայաստանում: Բայց մենք ուրիշ ելք չունենք. միայն չարքաշությամբ տոկալ և զոհաբերությամբ ու նվիրվածությամբ, սեփական աշխատանքով հաղթահարել բոլոր այսօրվա դժվարությունները՝ միշտ վառ պահելով վաղվա ավելի պայծառ օրերի հույսը:

Աստվածաշունչ մատյանն ասում է Ս. Պողոս Առաքյալի բառերով. «Նեղությունները համբերություն են առաջ բերում, և համբերությունը՝ տոկունություն, և տոկունությունը՝ հույս. և հույսը երբեք չի ամաչեցնի» (ՀՌՈՄ. Ե. 4–5):

ՀՈԻՑԸ թող լինի մեր բոլորի կյանքի լույսը, որ վառվում է ՀԱՎԱՏՔՈՎ և ճառագայթում ՍԻՐՈՎ, վասն փառացն Աստուծո և վասն շինության աղգիս Հայոց:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8 Փետրվար 1998
Ս. Էջմիածին